

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՇԵՔՍՊԻՐ ՎԻԼԻԱՄ, Թարգմանութեամբ Սենեքերիմ Արծրունու՝
ՀԱՄԼԵՏ, ողբերգութիւն հինգ արարւածով: Հրատարակութիւն Բար-
սեղ Քամալեանցի: Թիֆլիս, տպարան Ռօտինեանցի, 1889 թ., քա-
ռածալ, յառաջաբան VII, 124 էրես, տառ № 10, գինը 1 ր.:

Շեքսպիրի գրւածների հալ թարգ-
մանութիւնների մասին մեր ամսագ-
րի առաջին Ա-ում առիթ ունեցանք
խօսելու: Գէորգ Բարիուդարեանցի
«Շէլլօ», Մալխասեանցի՝ «Արքայ
Լիր» և Յովհ. Լալալեանցի՝ «Ջուր
տեղը մեծ աղմուկ» թարգմանութիւն-
ներից չեսու, ահա մեր սեղանի վերալ
դրած է «Համլէտ» — թարգմանու-
թեամբ Սենեքերիմ Արծրունու:

Մի բոլորովին անաջող գործ.
ծիշդ ալեքան անաջող, որքան պէտք
էր, որ մենք, ալ թարգմանութիւ-
նով, չը ճանաչէինք Շեքսպիր-հեղի-
նակի հանճարեղ լեզուն: Համլէտ-հօր
ուրականը, իւր գծագրութիւններով,
որպէս մենք սովոր ենք տեսնել բեմի
վերալ, աւելի է նման իսկական Համ-
լէտին, քան պ. Արծրունու ալս թարգ-
մանութիւնը իւր բնագրին:

Մեզ գուցէ առարկեն, թէ թարգ-
մանութեան հարազատութիւնը պար-
տաղիր է, մանաւանդ մի ալեպիսի
գրւածքի նկատմամբ, որը, ուրիշ լե-

զուներում, աղաւաղութեան չափ փո-
փոխութիւնների է ենթարկւած: Մեզ
գուցէ առարկեն նաև ալն, թէ բեմի
համար նշանակւած լինելով, բեմա-
կան պահանջները ալ են, գրակա-
նութեան պահանջները՝ ալ, և որ, ու-
րեմի, թարգմանութիւնն էլ կարող
է ալ բնաւորութիւն կրել, քան եթէ
նախնք նորա վերալ բուն գրական
տեսակէտից:

Այդ և նման առարկութիւնները
բոլորովին անտեղի են: Շեքսպիրը
գրել է «Համլէտ» որոշ բնաւորութիւն
կրող լեզուով. գործող անձերից իւ-
րաքանչիւրին տուել է որոշ բնաւո-
րութիւն և, իւրաքանչիւրի բնաւո-
րութեան և գործողութեան հանգա-
մանքների համեմատ, ամեն մէկի բե-
րանը դրել է որոշ լեզու, որոշ ոճեր:
Եւ բարձր դրամատիզմ և հեզնու-
թիւն և սարկաղմ և վերամբարձ վսե-
մութիւն և ծաղր և ցինիզմ և ալլա-
բանութիւն և երկչոտութիւն և անա-
պաշտութիւն և երկդիմութիւն և

պարզախօսութիւն—այդ բոլորի համար հարկաւոր է համարել Շեքսպիրը ոչ միայն բնական հանգամանքներ ստեղծել, այլ և այդ հանգամանքների համեմատ լեզու բանեցնել, Ով թարգմանում է, նա պարտաւոր է հետեւել հեղինակին և ճիշդ թարգմանել լեզուի նրբութիւնները. իսկ եթէ որ և իցէ փոփոխութիւններ է անում թարգմանողը, նա այդ պէտք է լիշատակէ ծանօթութիւնների մէջ:

Պ. Արծրունու լառաջբանից, սակայն, գործին անտեղեկ ընթերցողը կարող է եղբակացնել իբր թէ իրօք այդ թարգմանութիւնը միացնում է իւր մէջ «բնագրի բոլոր լատկութիւնները»: որովհետև ինքը թարգմանողը բնական է գտնում, որ «մեր ժամանակակից թարգմանիչները պարտ են փախչել միակողմանիութիւններից և փոխանցանել (այսինքն ի հարկէ՝ փոխադրել) կամ թարգմանել «Համէտ» ալեպէս, որ բնագրի բոլոր լատկութիւնները, ի կարեաց չափու, արտալատուի և մարմնան», թարգմանութեանց մէջ»:

Այդպէս էլ պէտք էր անել և այդ պարտականութիւնը ոչնչով չի նւազում նորանով, որ թարգմանիչը «թարգմանելով «Համէտը», միշտ աչքի առաջ է ունեցել հալկական մանուկ բեմը և հաչ հանդիսականներին, որոնք պիտի հասկանալին բեմից արտասանած մեղախօսութիւնները»: Մեզ համար բաւական է, որ հաչ ընթերցողը կարող է ընդունել պ. Արծրունու թարգմանութիւնը, որպէս բնագրի բոլոր լատկութիւնները իւր մէջ բովանդակող: Արդ, որովհետև դա մեծ չափազանցութիւն է և որովհետև

մենք մեծ գրական չափ ունինք, որ Շեքսպիրը հաչ գրականութեան մէջ պրօֆանացիալիւնէ՝ ենթարկելու, առաջին մենք շեշտելով զգուշացնում ենք, որ հաչ ընթերցողները չը դատեն Շեքսպիրի «Համէտը» պ. Արծրունու թարգմանութեան հիման վերաջ, Մենք ալս ըտպէին կտորներ կը բերենք՝ խնդիրը պարզելու համար. Բայց էս գլխից պիտի լատենք, որ պ. Արծրունին 1) չատ տեղեկում Շեքսպիրի խօսքերի իմաստը չի հասկացել, 2) թող է տեւ նոյն իսկ հալերէն լեզուի խոշոր սխալներ, 3) փոփոխել է կտորներ, հետեւելով ռուսական անաղղ թարգմանութիւններին, 4) ամեն տեղ ստորացրել է Շեքսպիրի ոճը և ալն, և ալն: Այդ բոլորի համար բաւական է մի քանի տեսարաններից օրինակներ բերել, դէմ առ դէմ կացուցանելով պ. Արծրունու թարգմանութիւնը՝ բնագրի հետ: Տեսնենք, ուրեմն, ի՞նչ է ասում Շեքսպիրը և ի՞նչ՝ պ. Արծրունին:

Այդ նպատակով մենք ընթերցողների առջև կը դնենք Շեքսպիրի խօսքերը հարազատ կերպով հալերէն թարգմանած պ. Աւետիք Նզեկեանից և նորա դէմը կը դնենք պ. Արծրունու թարգմանութիւնը: Որ պ. Նզեկեանի թարգմանութիւնը հարազատ է՝ գրեթէ բառացի թարգմանութիւն Շեքսպիրի—այդ մենք ինքներս ստուգած ենք, համեմատելով բնագրի և, զուգընթացաբար ֆրանսերէնի հետ: Բայց չը նպատ դորան, մենք տեղ-տեղ առաջ կը բերենք նաև անգլիական բնագիրը և նորան կից՝ նաև ֆրանսուա-վիկտոր Հիւգօ-ի ֆրանսերէն նմանապէս

ՇԵՔՍՊԻՐ

Մարցելլո:

.....

.....

Հօրացիօ: Ո՞վ ես դու, որ բռնակալում ես գիշերուպ ալս ժամը, միանգամայն և արդ աղնական և սպառնադմիկ կերպարանքը, որով երբեմն շրջում էր Դանեմարքի անցեալ վեհափառութիւնը: Հարկադրում եմ քեզ երկնքի անունով, խօսի՛ր:

Բերնարդօ: Տես, անց է կենում գոռողարար:

Հօրացիօ: Կանց, խօսի՛ր, խօսել եմ հրամայում քեզ, խօսի՛ր:

Մարցելլօ: Նա գնաց—չը կամեցաւ պատասխանել մեզ:

Բերնարդօ:

.....

.....

Հօրացիօ: Առաջի Աստուծոյ, մըտքիցս չէի կարող անցկացնել արդ, առանց իմ սեպհական աչքերիս ըզգալի և փպտնի վկայութեանը:

Մարցելլօ: Անպէս չէ, որ նա շատ նման էր Թագաւորին:

Հօրացիօ: Որպէս ինքդ քեզ: Զըրահը ի՞սկ նորա կրած զրահն էր, երբ նա խղթահարեց մեծամիտ Նորվեգացուն. արդպէս էր նա կուտակում լոնքերը արն ժամանակ, որ, մի կատաղի տեսակցութեան միջոց, ոտի տակ սառուցիլ վրալ ճմլեց սահնակաւոր Պօլեակին: Տարօրինակ բան... (Tis strange բնագրի մէջ. c'est étrange! Ֆրանսուա Հիւգօ-ի Թարգմ. մէջ):

ԱՐԾՐՈՒՆԻ

{ Մօտաւորապէս նոյնը:

Ո՞վ ես դու, որ տիրապետել ես կէս գիշերուպ դեղեցիկ ժամը զինուորական զգեստով և զէնքով զարդարուած, որով շրջում էր երբեմն Դանիայի Թագաւորը: Յանուն երկնքի երդուեցնում եմ քեզ, խօսի՛ր:

Մարցելլօ: Նա վիրաւորուեց: Նա հեռանում է:

Կանգնի՛ր, խօսի՛ր, երդուեցնում եմ քեզ, խօսի՛ր:

{ Մօտաւորապէս նոյնը:

Երդում եմ Արարչի անունով, որ եթէ իմ սեպհական աչքերս ինձ երաշխաւոր չը լինէին, ես ուրիշի խօսքերին չէի հաւատալ:

Նոյնը:

Ինչպէս դու ինքդ քեզ: Իսկ և իսկ արնապէս էր զրահաւորուած, ինչպէս գոռող Նորվեգիացուն խորտակելու ժամանակ. նոյնպէս լոնքերը կիտած, ինչպէս մենամարտութեան ժամանակ լեհացուն ձգեց սառուցի վերալ: Ան իմանալի է:

ՇԵՔՍՊԻՐ

Մարցելլո։ Այդպէս, երկու անգամ արդէն և ճիշդ այս մեռելական ժամին, արեսական ճեմքով անց էր կենում մեր պահատեղի մօտով։

Հօրացիւ։

Մարցելլո։ Լաւ, նստե՛ք և թող գիտեցողը ասէ ինձ, թէ ինչի՞նք այս անբան խիստ և անբան աշակուղ պահպանութիւնն, այսպէս ամեն գիշեր երկրի բնակիչներին դիտադարձն են անում։ Ինչո՞ւ համար է այս պղնձէ թնդանօթների ամենօրեայ ձուլմունքը և անբան պատերազմական պաշարեղէնի դրսից գնելը։ Ինչո՞ւ անբան ստիպմունք նաւաշէնների վրայ, որոնց տաժանալից աշխատանքը կիրակին հասարակ օրից չի ջնկում։ Ի՞նչ է այդ շնչասպառ գործունէութեան նպատակը, որ աշխատակից է անում գիշերը ցերեկին։ Ո՞վ է այս բանը ինձ բացատրել կարողացողը։

Հօրացիւ։ Այդ կարող եմ ես. գոնէ շուտից այսպէս է պտտում։ (That can Y; at least, the whisper goes so.) Մեր հանգուցեալ թագաւորը... կուրի կանչւեց... Ֆորտենբրաս Նորւեգացիից, որին մղում էր մի գոռոզ նախանձաւորութիւն։

Պ. Արծրունու այս դարձածներից չի հասկացում, թէ ո՞վ ո՞ւմ կանչեց կուրի և առհասարակ նօտրատիպ խօսքերը անհասկանալի են։ Անցնենք այժմ Համլէտի նշանաւոր մենախօսութիւններից մէկին։

Տ ե ո ո ո ո ո ե ի ի ի ի ի Բ.

Համլէտ։ Ո՛հ, եթէ այս շատ ու շատ թանձր մարմինը կարենար հալ-

ԱՐՇՐՈՒՆԻ

Իսկ այդ կերպ նա երկու անգամ խոր գիշերուակ մէջ անցաւ մեր մօտով մարսի քաղերով։

Մօտաւորապէս նոյնը։

Նստե՛ք, բարեկամներ, թող բացատրէ, ով որ գիտէ, թէ ինչո՞ւ համար են գիշերալին այս խիստ և արթուն պահապանները, որոնք խանդարում են Գանիալի ժողովուրդի քունը։ Ինչո՞ւ համար է, որ ամենայն օր թնդանօթներ են ձուլում և օտար երկիրներից պատերազմական իրեղէններ առնում, գործաւորներին բռնութեամբ նաւարան ուղարկում, որտեղ նոքա չեն զանազանում տօնը հասարակ օրից։ Ով կը բացատրէ ինձ։

Ես. Գոնէ այսպէս կը պատմեմ. մեր հանգուցեալ թագաւորը... մենք մարտեց Նորվեգիայի Ֆորտենբրասի հետ։ Նա (նվ՛ նա) դրդուած լինելով իւր նախանձելի բազդից՝ (ո՞ւմ) նորան մենք մարտութեան կանչեց։

Ո՛հ, եթէ դուք, իմ հոգոյս շղթաներ, դու, անբան ամբացեալ ոսկե-

ՇԵՔՍՊԻՐ

ԱՐԾՐՈՒՆԻ

ւիւն լուծւել և ցնդել իբրև ցող, կամ
 եթէ Յաւիտենականը իւր թնդանօթ-
 ներն ուղղած չ'ունենար անձնասպա-
 նի վերապ. . . Աստուած իմ, Աստ-
 ուած:¹) Որքան ծանր, մարած, անհամ
 և ամուլ են երևում ինձ այս կեանքի
 բոլոր վախերները, ինչ եմ անում
 ալդ, ինչ եմ անում. դա՛ մի անքաղ-
 հանք պարտեղ է, ուր մոլի խոտն հա-
 տիկ է տալիս, ուր աւելի տեղ են
 գրաւում ապականւած ու անպիտան
 բաները: Պէտք էր, որ բանը աշտեղ
 հասնէր: Երկու ամիս միայն է նորա
 մեռնելը. ո՛չ, ալդքան էլ չէ, երկուս
 չը կալ. անպիսի մի պատական
 թագաւոր, որ ան էր սորան՝ ինչ
 Հեպերիօնը մի ալծամարդի. ալքքան
 խանդոտ (սիրով վրքը) մօրս համար,
 որ չէր ուզում թողնել, թէ երկնքի
 հովերը խտուրթեմք դիպչեն սորա
 երեսին: Երկինք ու գետինք— վիշմ
 միթէ: Ո՛հ, սա (թագուհին) անպէս
 էր փաթաթւում նորան, որ կարծէիր
 թէ իւր ցանկութիւնը լազենալով,
 էլ աւելի աճումն էր առնում: Իսկ
 հիմն, մի ամիս չ'անցած. . . է՛հ,
 թողնենք ալդ մոսածութիւնը. . . Բե-
 կունեութիւն, քո անունդ է
 կիւն: ²) Մի փոքրիկ ամիս, ղեռ
 չեն էլ մաշած ալն մաշիկներն, ո-
 ռոնցով նա գնում էր խեղճ հօրս դի-
 ակի վտարից, Նիօբէի նման արտաս-
 ւաթոր: Եւ. Բնչ: դա՛, նոց ինքն դա՛,—
 ո՛վ երկինք. անասուն ասածդ էլ, որ
 խորհրդածութիւն չ'ունի, աւելի եր-
 կար կը պահէր սուգը,—պսակւած՝
 իմ հօր եղբօրս հետ, հօրըս եղբօրը,
 միայն՝ ալքքան նման հօրս, որքան

րացս զանգուած, փշրուէիք, քալքալ-
 ուէիք և ցող դառնալիք, և կամ թէ
 Դու, Դատաւոր երկնքի և երկրի,
 չը սահմանէիր օրէնք անձնասպա-
 նութեան դէմ, ո՛հ, Աստուած իմ, Աս-
 տուած: Որքան դարչելի, որքան կո-
 պիտ, դատարկ, անպտուղ և չնչին է
 երևում աչքիս կեանքն այս աշխար-
 հում: Ատելի աշխարհ: Կեանք, ղու
 Բնչ ես. վալրենի, անպտուղ, չորա-
 ցած տունկերով խեղդուած մի պար-
 տէղ: Ինչո՞ւ մինչև ալն աստիճան
 պիտի հասնէր: Միայն երկու ամիս
 է, որ նա մեռաւ, ո՛չ, երկու էլ չը
 կալ: Թագաւորն ալքքան աղնիւ, որ-
 քան Հեպերիոն Աստուծոյն (?) հա-
 մեմատելով. ալքքան խանդակաթ
 սիրով սիրում էր մօրս, որ երկնալի
 հողմին կ'արգելէր դիպչել երեսին:
 Երկինք և երկիր, Բնչու եմ վիշմ—
 սա էլ նորան ալքքան անձնատուր էր,
 նորա սէրը կարծես սիրոյ երջանկու-
 թեան հետ աճում էր, և մի ամիս
 հաղիւ անցաւ. . . լաւ է չը մտածել
 դորա վերալ: Թուլութիւն. ահա
 քո անունը, ո՛վ կիւն: Մի կարճ
 և դիւրնթաց ամիս. ղեռ ալն կօշիկ-
 ները չէին մաշուել, որոցմով նա սգա-
 ւոր իբրև Նիօբէ, հօրս դադաղին էր
 հետևում: Ո՛հ, երկինք, անխմաստ և
 անբարբառ. դադանն անգամ աւելի
 սուգ կը պահէր: Նա հօրեղբօրս կիւն
 է, իսկ հօրեղբարս ալքքան նման է
 հօրս, որքան ես Հեքթուլլէսին: Մի
 ամիս է միայն, և ղեռ կեղծ արտա-
 սուաց հետքերը չը ցամաքած իւր
 աչքերի վերալ, նա արդէն ամուսին
 է: Ո՛հ, պիղծ անհամբերութիւն. ալդ-

ՇԵՔՍՊԻՐ

ես՝ Հերքուլէսին: Մի ամսում, առանց անգամ սպասելու, որ իւր կեղծ և պատիր արտասուքի աղը դադարէր իւր կարմրացած աչքերը բորբոքելուց՝ նա ամուսնացաւ: Ո՛վ, ոճի՛ր խանդ, արպիսի բաղձոտութեամբ վազել դէպի ազգապիղծ անկողինը: Դա մի վատ արարք է, որ կարող չէ բարի վախճան ունենալ: Բայց բեկվի՛ր, սի՛րոտ իմ, որովհետեւ պէտք է լեզուս կապ պահեմ:

Բայց ահա և Համէտի հուշակաւոր մենախօսութիւնը—«Լինել, թէ չը լինել»: Արարած երկրորդ: Տեսարան առաջին: Տեսիլ Ա.

Համէտ: Լինել, թէ չը լինել— ահա այդ է խնդիրը: Որն է աւելի հոգու աղնութիւն, տանել լկողբադդի նետերին ու քարերին, թէ զինել ծովահեղեղ վշտերի դէմ և, ընդդիմանալով վերջ տալ նոցա: Մեռանիլ... քնանալ,*¹) էլ ոչ աւել... Եւ ասել թէ քնանալով վերջ ենք տալիս սրտի ցաւերին և ընական հաղար ու մէկ տանջանքներին, որոնցով օժտած է մեր մարմինը, դա մի վախճան է, որին կարօտով պէտք է փախազել:²) Մեռանիլ... քնանալ, քնանալ, դուցէ երազել: Ահ, ահ, ահ, ահ է տարակուսանքը: Որովհետեւ մահու աղք. քնի մէջ ինչ երազներ կարող են դալ, երբ մենք աղատուել ենք մահկանացոց ու չուզում ենք երից: ահ, բանը մեղ կանգ է առնել տալիս: Ահա այդ խոր-

ԱՐՄԻՈՒՆԻ

պէս արադ ընկնել աղղապղծութեան անկողնու մէջ: Չար է գուշակում այս ամենը: Վշտացի՛ր, հոգիս, չըրթունքներս պէտք է լռեն:

Լինել, թէ չը լինել—ահա այն է խնդիրը:—Որն է աւելի ազնիւ, տանել չարագործ բաղդի նետերը և հարուածները՝ թէ դիմադրել թշուառութեանց ուղիւնսին դէմ՝ և պատկառմանով վերջ տալ նոցա: Մեռանիլ, քնել, ոչ աւելի՛ և գիտենալ, որ այն քնով մենք վերջացնում ենք բոլոր վշտերը և հաղար մի բնական աղտեղութիւններ, որ ժառանգել է մեր մարմինը.— ամենացանկալի վախճան:— Մեռանիլ —քնել,—քնել: Բայց եթէ այն քնի մէջ մեղ երազներ ալցեւեն.— ահա արգելք: Որպիսի երազներ կարող են լինել մոռեալ քնի մէջ, երբ մենք մեղանից թափ կը տանք երկրաչին՝ բոլոր ունաչնութիւնները: ահա ինչն է ընդմիջում մեր ապագայ ճանապարհը: ապապէս ով կը համբերէր ժամանակիս պատիժը և ծաղրը իրաւանց անզօրութիւնը, իշխանասէրների ճնշումը, գողողների անարգանքը, մերժած սիրու տանջանքը,

*) Դիտմամբ երեք վանկանի են վերջբաժն, որպէս զի մտածողութեան ժամանակ արեւ:

ՇԵՔՍՊԻՐ

ԱՐԾՐՈՒՆԻ

հրդածութիւնը դատապարտում է մեզ երկարօրէն ապրելու թշուառութեան:

(բաց թողած)

Ով վերջապէս կամք կ'ունենար համբերել ժամանակաւորիս ծաղրերին ու թշնամանքին, հարստահարողի նախադիմքին, աղքատութեան գլխակորութեանը, արհամարած սիրող տառապանքին, օրէնքի դանդաղութեանը, իշխանաւորի լանդզնութեանը և այն կիցերին, որոնք, անարժանների կողմից, տրուում են համբերատար արժանաւորին, եթէ կարողանար մի հասարակ հերիւնով *) խաղաղանալ դոցանից: Ով կը կամենար կրել իւր բռնները, հեծել ու քրտինք թափել մի ճշող կեանքի տակ, եթէ որ և է բանի երկիւղը մահից՝ ալը չը խուզարկած դաւառից անդին, ուստի ոչ մի ճանապարհորդ վտ չէ գալիս, չը պղտորէր մեր կամքը և չը ստիպէր մեզ աւելի շուտ տանել այն չարիքները, որ ունինք, քան սլանալ դէպի միւսները, որ չենք ճանաչում: Աղպէս, գիտակցութիւնը մեզ ամենիս երկչու է դարձնում. աղպէս, որոշակամութեան կենդանի երանգները տըժգունում են մտածութեան դալուկ շողքերի տակ. աղպէս, ամենաուժեղ և ամենակարևոր ձեռնարկութիւնները ալը մտքի առջև խոտորում են իրենց ընթացքից և կորցնում են «գործ» անունը... Յուշիկ հիմա: Ահա

դատաւորաց ինքնակամութիւնը, երբ ինքդ սրի մի հարուածով կարող ես ալը ամենից ազատուել: Ո՞վ տնքալով և քրտինքով կը տանէր կեանքի ծանրութիւնները, եթէ վտմահուան երկիւղը, այն անծանօթ աշխարհը, որ տեղից ոչ ով չէ վերադարձել, չը շփոթեցնէր մեր կամքը և չը հարկադրէր տանել կեանքի տառապանքները, փոխանակ նետուելով դէպի դադար, դէպի անլստութիւնը: Աղպէս ուրեմն խղճմտանքը մեզ դարձնում է վախկոտ. աղպէս հանգչում է մեր մէջ ուժեղ կամքի և վճռահատութեան արեղը, երբ մենք սկսում ենք խորհել, և մեծամեծ նշանակութիւն ունեցող նպատակները շեղում են ճանապարհից: Ա՛, Օֆելիա... (Ո՛հ, Նեմֆալ): Ո՞վ հարս, քիչի՛ր դու ինձ քո աղօթքների մէջ:

*) Հերիւնը, ժողովրդական խօսքով Հերօնը—ծակելու գործիք է, մինչդեռ պ. Արծրունին Համլէտին դուրս է բերում սրով:

ՇԵՔՍՊԻՐ

ԱՐԾՐՈՒՆԻ

գեղեցիկ Օֆելիան... Հրեղէն կուս,
աղօթքիդ մէջ քիչէ իմ բոլոր մեղ-
քերս:

Մինչ ավժամ բերած կտորները մէջ պ. Արծրունին, որքան և իցէ, Շեքս-
պիրի խօսքերը թարգմանում է: Բայց անն կտորներ չորրորդ գործողու-
թիւնից, որտեղ պ. Արծրունին իրան ուղղակի Շեքսպիրի տեղն է դրել:
Այդ ալն սրտաշարժ տեսարանն է, որը ներկայացնում Օֆելիային խեղացնո-
րութեան մէջ և որտեղ նա խօսում է երգերով: Ինչ ասել կ'ուզէ, որ Օֆե-
լիան ցնորամօ է Համլէտի վրայ, թէպէտ նա, կարծես, ողբում է իւր հօր մահը:

Այսպէս չորրորդ, Երեսներ 5-րդ, 7-րդ և 8-րդ տ.

.....
.....

Թագուհի: Ինչ է պատահել քեզ,
Օֆելիա:

Նոյնը:

Օֆելիա (երգում է):
Ինչով ջոկեմ ձեր սիրողին
Ուրիշ մէկից.
Բոժոժ գդակովն ու իւր փախով,
Սանդալ կոշկով: 4)

Օֆելիա: Ճանաչում էք հողմը
սիրելուն
ձերմակ փետրոց մէջ ուժեղ դիւ-
ցազուն
Նա էր արի և մի քաջ սրտի տէր:

Թագուհի: Ախ, խեղճ Օֆելիա,
այդ ինչ ես երգում:

Նոյնը:

Օֆելիա: Ասում էք: Դէ լնւ մտիկ
արէք: (Երգում է)

Ես ինչ եմ երգում, հապա լսեցէք
իմ երգը (Երգում է):

Մեռաւ ու գնաց, տիկին,
Մեռաւ ու գնաց:
Գլխի վերև բուլ կանանչ
կրքնկի վերայ քար:
Օ'հ, օ' (Ժողովուրդ լսում է): 5)

Մեռաւ, մեռաւ, ո՛հ իմ հայրը,
Մեռաւ և արդէն թաղուեցաւ.
Ծաղիկ ծածկեց իւր տապանը,
Շիրիմ փակեց դամբարանը:

Թագուհի: Մի, Օֆելիա, մի:

Անգին Օֆելիա:

Օֆելիա: Մտիկ արէք, աղաչում եմ:
Լերանց ձեռն պէս ճերմակ պա-
տանը... (Ժողովուրդ և լսողներ):

Ոչ, ոչ. լսեցէք իմ երգին (Երգում է
և Երգում է լսողները):

Նա ննջեց ի քուն հանգստեան
և արտասուքներ ինչպէս եղեամ'
Ջովագրին նրան:

ՇԵՔԱՊԻՐ

Թագուհի (Բագուհի): Աւա՛ղ, տե-
սէք աչտեղ, իմ տէր:

Օֆելիա (շորահանուհի).

Հեշտաբուրիկ ծաղկով դարդ *)

Նա գնաց փոսը, սիրոյ լացի

Յողովն անցողիկ:

Թագաւոր (Օֆելիայի): Ի՞նչպէս էք,
սիրունիկ տիրուհի:

Օֆելիա. Լաւ, Աստուած ձեզ
վարձատրէ: Ասում են, թէ բուն, ժա-
մանակով, հացարարի աղջիկ է եղել:
Տէր, մենք գիտենք՝ մենք ինչ ենք,
բայց չը գիտենք՝ ինչ կարող ենք լի-
նել: Աստուած ձեզ սեղանա-
կից:

ԱՐԾՐՈՒՆԻ

Ո՛հ, ճաշիր, սիրելի՛ս:

Ինչպէս է քո առողջութիւնը,
Օֆելիա:

Լաւ է, Աստուած ձեզ վարձատ-
րէ: Ասում են, որ բուն հացթուխի
աղջիկ է եղել: Աստուած իմ, մենք
գիտենք, թէ մենք ինչ ենք, բայց չը
գիտենք թէ ինչ կը լինենք: Աս-
տուած ձեր սեղանին լիու-
թիւն տալ:

Նօտրաշար Նախագասութեան միտքը պ. Արծրունին, որպէս երևում
է, չի հասկացել: Աւանդութիւնը ասում է, թէ Յիսուս Քրիստոս, աղքա-
տի շորով, գնացել է մի հացթուխի մօտ, սորանից հաց խնդրելու: Հաց-
թուխի աղջիկը նորան մերժում է հաց տալ: Քրիստոսը աչք աղջկան բու-
ն է դարձնում: Դորանից ծագել է այս դարձածը՝ Աստուած (Քրիստոս) ձեզ
սեղանակից: աչխնք՝ մի՛ մերժէք: Բողոքովին ալ բան է ասում պ. Արծ-
րունին, որովհետեւ Աստուած կարող է լիութիւն տալ մէկին, որպէս և
հացթուխը աղքատ չէր, բայց կարող է լիութիւն ունեցողը աղքատին
մերժել, որպէս հացթուխի աղջիկը մերժեց աղքատի շորով Քրիստոսին:

Թագաւոր. Որ և է ակնարկ իւր { Խեղճ, միտքը հօր վերալ է:
հօր մասին:

Օֆելիա. Աչք մասին չը խօսենք,
խնդրեմ. բայց թէ մէկը ձեզ հարցնէ,
թէ աչք ինչ է նշանակում, այս ասա-
ցէք (երգում է). { Մօտաւորապէս նուր:

Բարի լույս, օրըս է Սուրբ-Վալենտին,
Վաղ են զարթել ամենքը:

Աղջիկ եմ ձեր պատահանի տակ,
Ձեզ Վալենտին լինելու:

Սիրելիս, պաթառ առաւօտ,
Գաղտնագողի եկել եմ,
Եղիր դու ուրախ Վալենտին
Նաշիր լուսանցքի տակին:
Իսկ ճա հագնուեցաւ շուտով,
Փակեց դռն երբ մեղմիկ:

*) Զարդարւած:

ՇԵՔՍՊԻՐ

Նա վերկացաւ, հալաւն հագաւ,
Բացեց դուռը սենեակի.
Մտաւ աղջիկ, որ էլ աղջիկ
Զ'իլաւ նա դուրս ալն տեղից: *)

(Որպէս տեսնում է ընթերցողը, բնագրի և պ. Արծրունու թարգմա-
նութեան մէջ զանազանութիւնը շատ է զգալի, բայց զեռ աւելին տեսէք
հետեւալում):

Թագաւոր, Սիրուն Օֆելիա:

Օֆելիա Արդարեւ, առանց հալո-
յանքի վերջ կը տամ բանին:

Սէրն Յիսուսին, սուրբ գլխութեան,
Ա՛յ, վա՛յ, ամօթ չ'ունիք, ի՛նչ:

Զաւիւները ալդ են անում, երբ
մօտն են.

Վատ են անում, Պրիապոսը *) գի-
տենալ.

Ինձ չը ճմուած, ասում է նա,

Կին անել ինձ խոստացաք:

Իսկ պատասխանը.

Եւ կ'անէի, ա՛յ, արեղակն վկայ,
Թէ դու չէիր եկել ծոցըս:

Նոյն ալդ տեսարանի վերջում կան երկու կտոր երգեր, որ ահա՛.

Օֆելիա (երգում է)

Երեսը բաց տարան նորան ճաղ-
բով **),

Ա՛յ, վա՛յ աւա՛ղ, աւաղ վա՛յ, ալ ա-
ւաղ,

Եւ փոսի վրալ ցողեց շատիկ ար-
ցունք:

ԱՐԾՐՈՒՆԻ

Նորան լաւէտ սիրել, պահել նա եր-
գունեց.

Բայց լետոյ խաբեց թողեց:

Բաւական է, Օֆելիա:

Ճշմարիտ, երգելու հարկ չը կալ, ես
խսկոյն կը վերջացնեմ: (Երգում է)

Մի՛ հաւատաւ դու նորան.

Սիրականդ վատ անգուլ է,

Կը ծիծաղէ քեզ վերայ:

Տարփածուին օրիորդն ասաց.

Արդեօք մոռացար քո երգմանց.

Զէի հաւատար ես երբէք,

Որ պսպէս ինձ մոռանաս:

Տարփածուն ծաղրով ասաց.

Իմ երգմունքը չեմ մոռցած.

Մի՛թէ աղջիկը չը գիտէ,

Որ հանաք, ես հանաք էի անում:

Գոց երեսով նորան զրին խոր գե-
րեզման.

Նոքա ժողովեցան բարձր լերան
վերան,

Առատ հոսէին արցունք ջերմա-
հոս, լորդահոս,

Երբ ծերունուն ալնտեղ թաղեցին:

*) Դիցարանական անձնաւորութիւն,
որին վաւաշոտ կանայք բաղձում էին:

**) Ճաղը՝ դադաղը բարձրացնող փայ-
տերն են:

ՇԵՔՍՊԻՐ

ԱՐԾՐՈՒՆԻ

Բարով Կրթաս Դոմ վարուժան:

Լաէրու:

Լաէրու:

Օֆելիա: Պէտք է երգէ՛ք՝

«Գիտին, գետին, գետին նորան
գլորեցէ՛ք»:Ո՛հ, ինչպէս աչս կրկնու-
թիւնը տեղին է: Խօսքը հաւա-
տադրուժ տնտեսի վերալ է, որ գո-
ղացաւ իւր տիրոջ աղջիկը:

Պէտք է դուք երգէ՛ք «ի գերեզման,

ի գերեզման կանչեցէ՛ք նորան»: Ինչ
լարմար է աչս եղանակը եր-գին: Սա աչն կառավարին է, որ
փախցրեց իւր պարօնի աղջկան:

(Նօտրաշար խօսքերով Օֆելիան ասում է, թէ իրան դուր է գալիս
«գետին, գետին, գետին» խօսքերի կրկնութիւնը, մինչդեռ պ. Արծրունին
ալլ բան է ասում):

Նւ լետու՛:

Օֆելիա (Երգելով)

Նւ էլ լետ չի՛ գալ,

Նւ էլ լետ չի՛ գալ:

Ո՛հ, նա մեռաւ.

Գնա մահի՛ճդ.

Նա էլ լետ չի գալ:

Իւր մօրուքը ձիւնածերմակ,

Շիկահեր էր գլուխը:

Նա գընաց, նա գընաց,

Ունալն են մեր ճիւղեր,

Ողորմեան, Տէր, իւր հոգուն.

Նւ համալն քրիստոնէից հոգուն:

Աղօթում եմ Աստուծուն. Աստուծո՛,

եղի՛ր մեզի հետ:

Նա չի դառնալ, նա չի դառնալ.

Նորան կրկին մենք չենք տեսնելու.

Ո՛հ, նա մեռաւ և թաղեցաւ,

Մենք նորան կրկին ալ չենք տես-
նելու:

Հողմը փչում է լերան վերայ,

Ուր թաղեցին ծերունուն՝

Նրեք նոճի, երեք ցարամի տնկե-
ցին,Որք լալիս են, որք լալիս են՝ որ-
պէս իմ վշտեր,

Նւ ցաւեր միշտ հեծեն:

Սորանով մենք վերջ ենք տալիս մեր խօսքին: Յոյց տալու հա-
մար պ. Արծրունու թարգմանութեան բոլոր սխալները, պէտք էր հետեւել
նորան տող առ տող,—մի բան, որ անկարելի է և աւելորդ: Որ պ. Արծ-
րունին կարող էր, իւր տաճած սիրովն համար դէպի հալկական լմու՛ր,
չը մերժել թատրոնական վարչութեան խնդիրքը՝ թարգմանել «Համլետը»

շտապով և մի որոշ խմբի ներկայացման համար,—մեծ ցանցանք չէ։ Այդ-
տեղ կալ արդարացնող հանգամանք։ Բալց ոչնչով չի արդարացում պ-
թարգմանչի ցանկութիւնը՝ գրական հրապարակ դուրս գալ մի թերի
գործով, որի վերալ աշխատելու համար նա տասը տարի ժամանակ էր վե-
րապահել իրան։

Ժ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ա Ն Գ Լ Ի Ե Ր Է Ն Բ Ն Ա Գ Ի Ր

¹) O, that this too too solid flesh would melt,
Thaw, and resolve itself into a dew!
Or that the Everlasting had not fix'd
His canon 'gainst self—slaughter! O God! O God!

Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն

Al si cette chair trop solide pouvait se fondre, se dissoudre
et se perdre en rosée!— si l'Eternel n'avait pas dirigé ses canons
contre le suicide!... O Dieu! o Dieu!—

Ա Ն Գ Լ Ի Ե Ր Է Ն Բ Ն Ա Գ Ի Ր

¹) Frailty, thy name is woman!

Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն

Fragilité, ton nom est femme!

Ա Ն Գ Լ Ի Ե Ր Է Ն Բ Ն Ա Գ Ի Ր

¹) To die,—to sleep,—
No more;—and, by a sleep, to say we end
The heart—ache, and the thousand natural shocks
That flesh is heir to,— 'this a consummation
Devoutly to be wish'd.

Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն

Mourir?... dormir,—rien de plus... et dire que par ce sommeil nous
mettons fin aux maux du coeur et aux mille tortures naturelles
qui sont le legs de la chair: c'est là une terminaison qu'on doit sou-
haiter avec ferveur.

ԱՆԳԼԻՆԵՐԷՆ ԲՆԱԳԻՐ

4) How should J your true love know
 From another one?
 By his cockle hat and staff,
 And his sandal shoon.

ՖՐԱՆՍԵՐԷՆ

Comment puis-je reconnaître votre amoureux
 D'un autre?
 A son chapeau de coquillages, à son bâton,
 A ses sandales.

ԱՆԳԼԻՆԵՐԷՆ ԲՆԱԳԻՐ

*) He is dead and gone, lady,
 He is dead and gone;
 At his head a grass—green turf,
 At his heels a stone
 O, ho! և այլն.

ՖՐԱՆՍԵՐԷՆ

Il est mort et parti, madame,
 Il est mort et parti.
 A sa tête une motte de gazon vert,
 A ses talons une pierre.

ԱՆԳԼԻՆԵՐԷՆ ԲՆԱԳԻՐ

*) Good morrow, 'tis Saint Valentine's day
 All in the morning betime,
 And la maid at your window,
 To be your Valentine:
 Then up he rose, and don'd his clothes,
 And dupp'd the chamber door;
 Let in the maid, that out a maid
 Never departed more.

ՖՐԱՆՍԵՐԷՆ

Bonjour! C'est la Saint—Valentin

Tous sont levés de grand matin.
 Me voici vierge, à votre fenêtre,
 Pour être votre Valentine.
 Alors, il se leva et mit ses habits,
 Et ouvrit la porte de sa chambre;
 Et vierge, elle y entra, et puis oncques vierge
 Elle n'en sorti.

Ա.

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ, ամսաթիւրթ, քառասներորդ եօթներորդ տարի. Հատոր խէ. Վենետիկ, ի տպարանի Ս. Ղազարու, 1889 թ., Յունւար, Փետրւար, Մարտ և Ապրիլ (128 երես ընդամենը):

Վենետիկի Միթիթարեանների «Բազմավէպը» կարող է համարուել թարգման նոցա գաղափարների և աշխարհակցողութեան. Տեսնենք ինչ է գրում, ինչ մտածում և զգում լուսաւորեալ Եւրոպայում գտնուող, համալսարաններով չըջապատւած, դարգանալու բոլոր չաջող պալմանները ունեցող այդ դեռ ևս անցեալ դարու երկրորդ կիսում հաստատւած Միաբանութիւնը:

«Բազմավէպի» չօղածները, ըստ բովանդակութեան, զետեղւած են 3 բաժիններում՝ Հալկականք, Բանասիրականք և Գիտականք. Յօղածներից շատերը «շարունակելի» են, բայց այդ չի խանգարում ընդհանուր հասկացողութիւն կազմելու նրանց բովանդակութեան և ուղղութեան մասին:

«Հալկականք»-ի չօղածներից ուշադրութեան արժանի են միայն Հ. Բ. Սարգիսեանի չօղածները: «Ազաթանդեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն» գրւածքի ներածութիւնից մենք իմանում ենք, որ Հ. Բ.

Սարգիսեանը պէտք է քննէ հետեւեալ խնդիրները. 1) Արդեօք Ազաթանդեղոսը ակնատես է եղել այն ղէպերին, որ նկարագրում է. ուրիշ խօսքերով՝ Ազաթանդեղոսը ժամանակակից է եղել Տրդատին ու ս. Գ. Լուսաւորչին, թէ ոչ. 2) Ազաթանդեղոսի պատմութիւնը ամբողջապէս պատկանում է Տրդատի քարտուղարի (Ազաթանդեղոսի) գրչին, թէ այդ մեղ հասած գիրքը կաղմած է այլ և այլ հեղինակութիւններից կամ, ինչպէս ինքը հեղինակն է ասում՝ «այլ և այլ հեղինակութեանց և գործոց կաղմակերպուած խմբագրութիւն մի»:

3) Այդ երկասիրութիւնը հալերէն գրւեց, թէ լուսարէն. 4) Այժմեան լուսարէն Ազաթանդեղոսի պատմութիւնը հալերէնի ընագիրն է, թէ ընդհակառակն հալերէն ընագրից վատուց եղած թարգմանութիւն. 5) «Լուսաւորչաւ կարծեցեալ ընդարձակ վարդապետութիւնը» ստուղի. հարադաս իցէ, թէ գործ վտնագունի ուրումն ժամանակաւ»: